ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 2447 <<28>> 08 2013թ.

Ձեր՝ 23.08.2013թ. թիվ 2621/1363 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ Ձեր 22.07.2013թ. թիվ 2621/1352 գրությանը ՀՀ ոստիկանությունը 21.08.2013թ. թիվ 2/2-1-2361 գրությամբ արդեն իսկ տվել է ոլորտը կարգավորող իրավական ակտերից, ինչպես նաև գրությունում շարադրված փաստերի ուսումնասիրությունից բխող հիմնավոր և սպառիչ պատասխան, ուստի, Ձեր վերոհիշյալ գրությունում շարադրված հարցերի վերաբերյալ կրկնակի ուսումնասիրություններ կատարելու և նոր մեկնաբանություններ տալու անհրաժեշտություն չկա:

Միաժամանակ ևս մեկ անգամ հարկ ենք համարում հիշեցնել, որ <<Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու մասին>> 14.01.2005թ. ՀՀ ոստիկանության պետի թիվ 1-Ն հրամանով, դիտորդների խմբի հաշվետվությունների վերաբերյալ ՀՀ ոստիկանության մեկնաբանությունների բողոքարկման կամ վիճարկման, համապատասխանաբար՝ նաև կրկնակի մեկնաբանությունների ներկայացման ընթացակարգ նախատեսված չէ:

Ելնելով վերոգրյալից, ևս մեկ անգամ խնդրվում է հետայսու ՀՀ ոստիկանության մեկնաբանություններն ընդունել որպես հիմք և դրանց ընթացքը լուծել վերոհիշյալ իրավական ակտի 14-րդ կետով սահմանված կարգով:

պետ, ոստիկանության գեներալ-մայոր **Վ. Եղիազարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1363 23.08.2013թվ.

ՀՀ ոստիկանության շտաբի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր
պարոն՝ Վ. Եղիազարյանին

Հարգելի պարոն Եղիազարյան,

21.08.2013թ. թիվ 2/2-1-2361 գրությամբ Ձեր կողմից մեկնաբանություն էր տրվել Դիտորդական խմբի 22.07.2013թ. թիվ 2621/1352 գրությանը: Նշված մեկնաբանության որոշ կետերի հետ Դիտորդական խումբը համակարծիք չէ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Թերություններին առնչվող.

1. ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Հրազդանի բաժնի ՁՊՎ-ի շենքային դիրքի ոչ բավարար պատճառները չպետք է նպաստի տվյալ ՁՊՎ-ի առաջին և երկրորդ խցերում պահվող անձանց իրավունքների խախտմանը:
2. Ինչ վերաբերվում է այն մեկնաբանությանը, որ *<<սպիտակեղենի և սրբիչների պոլիէթիլենային թաղանթի մեջ կպչուն ժապավենով փաթեթավորված լինելը դա Դիտորդական խմբի մոտ առաջացած տպավորությունների արդյունք է>>*, դա այդպես չէ, որովհետև Դիտորդական խումբը տպավորություններով, կամայական մեկնաբանություններով և երևակայություններով չի գործում, այլ՝ ցանկացած ներկայացված փաստի վերաբերյալ ունի իր հիմնավոր պատճառաբանությունը: Դիտորդական խումբը տվյալ փաստի կապակցությամբ ունի հիմանվորված կազմված արձանագրություն, որը տվյալ ոստիկանության բաժնի հերթապահ մասի պետը հաստատել է իր ստորագրությամբ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՀՊ № 3642
24 08 2013թ.

Խախտումներին առնչվող.

1. Հետախուզվող Գ. Քոչարյանին <<Զվարթնոց>> օ/կ-ից հայտնաբերելու 11.04.2013թ. ժամը 07[05]-ի Ձեր կողմից տրամադրված տվյալը նրա անձնական գործում ոչ մի տեղ

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

արձանագրված չի եղել: Այժմ Դիտորդական խմբի համար անհասկանալի է հանգամանքը, թե նշված ժամը որտեղից է վերցվել և դրվել մեկնաբանության մեջ:

2. Իսկ Անդրեյ Զյաբլիցկի բերման ենթարկելու արձանագրության մեջ հասցեն ճիշտ չգրելու փաստը չի կարելի համեմատել Դիտորդական խմբի կողմից ներկայացված ամսաթվի տեխնիկական վրիպակի հետ, որովհետև ըստ <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ >> -ի 8-րդ կետի համաձայն. *<< ՁՊՎ չեն ընդունվում այն անձինք, որոնց վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի որոշումը կամ ձերբակալման արձանագրությունը, կամ քննիչի, դատախազի կամ դատարանի որոշումը լրացված են խախտումներով>>:*

Այս ամենից ելնելով Դիտորդական խումբը միանշանակ կրկին կարող է պնդել, որ տվյալ փաստաթուղթը կրել է ձևական բնույթ. եթե ՁՊՎ-ի վարչակազմը ըստ պատշաճի կատարեր իր պարտականությունները, ապա այդ խախտումը բացահայտված կլիներ արդեն իսկ ՁՊՎ ընդունելու ժամանակ:

Միաժամանակ հարկ ենք համարում Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ա. Զյաբլիցկին 14.06.2013թ. 15[45]-ին խցից դուրս բերելը, դատարան տեղափոխելը, դատարանի դահլիճից ազատ արձակելը, այդքան էլ չի հիմնավորում նրա՝ 72 ժամից ավելի չպահելու փաստը: Որովհետև.

- ✓ ՀՀ քր.դատ.օր-ի 129 հոդվածի 2-րդ մասի համաձայն *<<Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերով ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի: Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերով ձերբակալվածին արգելանքի վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում պետք է մեղադրանք առաջադրվի: Կասկածյալին նշված ժամկետում կարող է մեղադրանք չառաջադրվել, եթե նա արգելանքի վերցվելու պահից 72 ժամվա ընթացքում իր նկատմամբ անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց կիրառելու կամ խափանման միջոց չընտրելու հետևանքով ազատվել է արգելանքից>>:*
  Արդյունքում նշված անձը պետք է, որ արդեն իսկ ժամը 16[00]-ին վարույթն իրականացնող մարմնի կամ բաժնի պետի որոշման համաձայն ազատ արձակված լիներ ՁՊՎ-ից:
- ✓ Ըստ ՀՀ քր.դատ.օր-ի 132 հոդվածի առաջին մասի՝ *<<Ձերբակալվածը, վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, ենթակա է ազատման, եթե՝*
  1) *չի հաստատվել անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու մասին կասկածը.*
  2) *բացակայում է անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը.*
  3) *լրացել է ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել >>:*

Տվյալ դեպքում անձը դատարանի դահլիճից դատավորի որոշմամբ ազատ արձակման ենթակա չէր, որովհետև տվյալ ձերբակալված անձը դատարան տեղափոխվել է վարույթն իրականացնող մարմնի միջնորդությամբ՝ դատարանում խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննարկելու, այլ ոչ թե նրան չկալանավորելու դեպքում ազատ արձակելու հարցը քննարկելու համար:

3. Ինչ վերաբերվում է Գ. Մինասյանի 18.06.2013թ. 17[11]-ին ազատ արձակելու քննիչի որոշմանը, Դիտորդական խմբի համար անհասկանալի է մնում այն փաստը, որ տվյալ անձը տեղափոխվել է դատարան խափանման միջոց կիրառելու համար, որը դատարանի կողմից կիրառվել է և միաժամանակ փոխարինվել է գրավով, և որից հետո տվյալ անձը այնքան ժամանակ է պահվել այնտեղ ուղեկցող դասակի հետ միասին, մինչև վճարվել է գրավը, որից հետո վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է որոշում, որն էլ ուղեկցող դասակի միջոցով փոխանցվել է Հրազդանի բաժնին:

4. Ինչ վերաբերվում է Սերգեյ Թանյանի մասով ներկայացված փաստարկներին
   - ✓ Ձեր կողմից անդրադարձ չի կատարվել, նրան <<Զվարթնոց>> օ/կ-ից բերման ենթարկելուց Հրազդանի բաժնում բերման արձանագրությունը կազմելու ժամանակ արգելանքի պահը չգրանցելու վերաբերյալ:
   - ✓ Ինչ վերաբերվում է այն փաստարկին, որ *<<Կոտայքի մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Կ. Գրիգորյանը դեկավարվել է <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներով՝ որոշում է կայացրել մեղադրյալ,գործող կալանավոր Ս. Թանյանին ՁՊՎ-ում տեղափոխելու մասին>>,* Դիտորդական խումբը համակարծիք չէ տվյալ որոշման հետ. ներկայացված օրենքի կետը նախատեսում է՝ կալանավորվածներին պահելու վայրում պահվող անձի ձերբակալվածներին պահելու վայր տեղափոխելը.*<<Կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությունը կալանավորվածներին պահելու վայրից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ, կալանավորված անձը կարող է տեղափոխվել Ձերբակալվածներին պահելու վայր՝ մինչև երեք օր տևողությամբ>>:* Ավելին՝ տվյալ կարգավիճակում գտնվող անձի ՁՊՎ ընդունվելու և ՁՊՎ-ում պահվելու գործառույթները կանոնակարգվում է ՀՀ քր.դատ.օր-ի 259 հոդվածի 3-րդ կետով և ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.12.08թ. ԼԴ/01/0197/06/08 նախադեպային որոշումով:
   - ✓ Իսկ ինչ վերաբերում է մեկնաբանության մեջ նշված այն պնդմանը, որ *<<խափանման միջոցը դատարանում ընտրելու մասին և կալանավոր Ս. Թանյանի ՁՊՎ տեղափոխելու քննիչի որոշումը բավարար է և ձերբակալման արձանագրություն կազմելու անհրաժեշտություն չկա և*

ձերբակալման արձանագրություն կազմելու դեպքում անհիմն կերպով կփոխվեր Ս. Թանյանի դատավարական կարգավիճակը և կսահմանափակեին նրա իրավունքները, քանի որ կալանավորված անձի իրավունքները առավել ծավալուն են, քան ձերբակալվածինը>>. Դիտորդական խումբը կրկին համակարծիք չէ, որովհետև տվյալ գործառույթները կանոնակարգվում են ՀՀ օրենսդրությամբ:

- ✓ Իսկ ինչ վերաբերվում է այն մեկնաբանությանը, որ *<<Ս.Թանյանը ՀՊՎ-ից ազատ է արձակվել բերման ենթարկելու նույն օրը՝ խափանման միջոցը ստորագրությամբ չհեռանալու մասին հիմքով, ուստի ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման 34-րդ կետի պահանջները չեն խախտվել, քանի որ նա 72 ժամը չլրացած ազատ է արձակվել>>:* Դիտորդական խումբը նշվածի հետ կրկին համակարծիք չէ, որովհետև եթե ուշադրություն դարձնենք ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.12.2008թ. ԼԴ/01/0197/06/08 նախադեպային որոշման 34–րդ կետի պարզաբանմամբ *<<Հետևաբար՝ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է **անհապաղ** (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ>>* մեջ նշված է ***անհապաղ*** բառը, որը արդեն իսկ պարզաբանվում է տվյալ որաշման 24-րդ կետով *<<... Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված **«անհապաղությունը» ՀՀ քրեական դատավարության իմաստով ձերբակալման եռօրյա ժամկետն է**, որից հետո անձը կա՛մ ազատ է արձակվում, կա՛մ մինչդատական վարույթ իրականացնող մարմնի միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվում է կալանավորումը>>:* Արդյունքում՝ տվյալ կարգավիճակում բացահայտված անձը առաջին հերթին ստանում է ձերբակալվածի կարգավիճակ և պետք է ձերբակալվի հետո նոր ընդունվի ՀՊՎ և որից հետո կատարվեր հետագա գործողությունները:

Այսպիսով՝ խնդրում ենք ևս մեկ անգամ ուսումնասիրել ներկայացված փաստարկները և տալ իրավական գնահատական կատարվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org